ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ծրարների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/08» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հուլիսի 30-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/08-2» պայմանագրում /այսուհետ՝ Պայմանագիր/ 2021 թվականի սեպտեմբերի 08-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝
Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգում:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է 25 օրացուցային օրով, ինչով պայմանավորված՝ <<ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>> վերտառությամբ Հավելված N 2-ում «մատակարարման ժամկետը» սյունակում «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինվել են «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 65 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

Փոփոխության հիմնավորում՝
Պայմանագրի 8.5 և 8.8 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ОБЪЯВЛЕНИЕ

об изменениях, внесенных в заключенный договор

Судебный департамент ниже представляет краткую информацию об изменениях, внесенных 08 сентября 2021 года в договор № DD-EAAPDzB-21/08-2 /далее договор/, заключенный 30 июля 2021 года в результате процедуры закупки под кодом DD-EAAPDzB-21/08 организованной с целью приобретения конвертов для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа, содержащего внесенное изменение.

Причина возникновения изменения:
Продление срока поставки товара.

Описание изменения:

Предусмотренный договором срок поставки товаров продлен на 25 календарных дней, в связи с чем слова <В течение 40 календарных дней со дня вступления в силу условия исполнения прав и обязанностей сторон, предусмотренных договором> в графе <срок поставки> приложения номер 2 под заглавием <ГРАФИК ПОСТАВКИ> заменены словами <В течение 65 календарных дней со дня вступления в силу условия исполнения прав и обязанностей сторон, предусмотренных договором>.

Обоснование изменения: Пункты 8.5, 8.8 договора.

Заказчик: **Судебный департамент**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
30.07.2021թ. ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/08-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «08» սեպտեմբերի 2021թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Խ.Ղազարյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ Ա/Ձ-ն (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 30.07.2021թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/08-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 25 օրացուցային օրով, ինչով պայմանավորված՝ <<ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>> վերտառությամբ Հավելված N 2-ում «մատակարարման ժամկետը» սյունակում «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 65 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Գորիս, Մ. Խորենացու 24
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 77961572
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 220269673558000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ԱԿԲԱ բանկ
Ղեկավարի պաշտոնակատար՝ Խ. Ղազարյան	Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ